

ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի շնորհավորական ուղերձը Կանանց տոնի առթիվ 07.03.2014

Հարգարժան տիկնայք՝ սիրելի մայրեր, քույրեր և դուստրեր,

Միրով ու ջերմությամբ շնորհավորում եմ բոլորիդ Կանանց միջազգային օրվա՝ գարնանային այս հիասքանչ տոնի առթիվ:

Մարտի 8-ից սկիզբ առնող Կանանց մեկամսյակը թող կրկնապատկի ձեր ուժն ու գեղեցկությունը, ձեր օրերը լցնի անսահման սիրով ու ջերմությամբ, որպեսզի դուք առավել նվիրումով շարունակեք իրականացնել վեհ ու ազգապահպան ձեր առաքելությունը՝ ի շահ հայ օջախների ամրության և մեր հայրենիքի շենացման:

Հարգելիներս, ապրեք առողջ և շարունակեք ձեզ բնորոշ իմաստնությամբ բոլոր ապարեզներում ամրապնդել ու ընդլայնել բարու և լույսի տիրույթները:

Միրելի կանայք,

Կրկին ու կրկին շնորհավորելով Մարտի 8-ի առթիվ՝ մաղթում եմ ձեզ ամենայն բարիք: Թող ձեր ընտանիքներում և ձեր սրտերում միշտ իշխեն սերն ու ներդաշնակությունը: